

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՐՄԵՆԻ

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1912-1922 ԹԹ.**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Մատենադարան Մերոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մելքոնյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա. Ա.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գինոսյան Ն. Լ.

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հուլիսի 30-ին՝ ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հունիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ



Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեմայի արդիականությունը պետք է դիտարկել ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական ասպարեզներում: Թեմայի վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքները նշանակալի ձեռքբերում են արդի պատմագիտության մեջ, հատկապես երբ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ գիտական շրջանակներում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությանը եղել են մասնակի անդրադարձներ: Թերևս դրա հիմնական պատճառը փաստական նյութի սակավությունն է, ինչը մենք փորձել ենք ամբողջացնել օտարալեզու (հիմնականում՝ թուրքերեն) արխիվային փաստաթղթերի և գրականության միջոցով: Թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև վերջին տարիներին Ստամբուլի հայոց պատրիարքարանի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրների շուրջ եղած զարգացումների համատեքստում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության գլխավոր նպատակներն են.

- հենվելով սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի և պատմագիտական մի շարք աշխատությունների վրա՝ համակողմանի լուսաբանել և ուսումնասիրել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը 1912-1922 թթ.,

- գնատահել տվյալ ժամանակաշրջանում արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի դերակատարությամբ պայմանավորված հանգուցային իրադարձությունները:

Կարևորվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- քննության առնել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կատարած աշխատանքներն արևմտահայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ որպես Օսմանյան կայսրության և արևմտահայության միջև հայկական համայնքի միակ պաշտոնական ներկայացուցիչ,

- ցույց տալ, որ Դիարբեքիրի հայոց թեմի առաջնորդ Ջավեն Տեր-Եղիայանի ընտրությունը պատրիարքական պաշտոնում ունեցել է կարևոր

դերակատարություն ներհամայնքային հարաբերությունների ամրապնդման առումով,

- բացահայտել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ունեցած մասնակցությունն Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցում,

- լուսաբանել 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին հայազգի պատգամավորների ներկայացվածության շուրջ պատրիարքարանի իրականացրած միջոցառումները,

- երիտթուրքական կառավարության որոշմամբ Հայոց ազգային սահմանադրության չեղարկումը և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի լուծարումը դիտարկել որպես ցեղասպանական գործողությունների շարունակություն,

- ներկայացնել Բաղդադում և Մոսկվում աքսորի ենթարկված Զավեն պատրիարքի ձեռնարկած միջոցառումները տեղի հայ գաղթականների փրկության և նրանց խնամքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ,

- պարզաբանել Հայոց ազգային սահմանադրության վերահաստատման դրդապատճառները,

- լուսաբանել հետպատերազմյան տարիներին Զավեն պատրիարքի գործունեությունը հայ որբերին ու կանանց հայտնաբերելու և նրանց փրկելու ուղղությամբ,

- քննության առնել Զավեն Տեր-Եղիայանի պատրիարքական լիազորությունների դադարեցման հանգամանքները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ատենախոսության հիմնական նյութը ներառում է 1912-1922 թթ: Տվյալ ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է գլխավորապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ծավալած գործունեության ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու և փոխկապակցված շղթայի մեջ դիտարկելու մղումով: Այդ նպատակով քննության ենք առել Առաջին աշխարհամարտի նախօրյակին և հետպատերազմյան տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի առնչությամբ արևմտահայության կյանքում տեղի ունեցած ուշագրավ իրադարձությունները: Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները միաժամանակ համապատասխանացվել են Կոստանդնուպոլսի

հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի պաշտոնավարության շրջանին (1913-1916, 1918-1922):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Ուսումնասիրության մեջ կիրառվել են պատմահամադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդները՝ հիմնվելով հայերեն և օտարալեզու արխիվային փաստաթղթերի, սկզբնաղբյուրների, պատմագիտական ուսումնասիրությունների և պարբերական մամուլի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի «Արևելագիտության» բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումներն արտացոլվել են հեղինակի հրատարակած 6 գիտական հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Հայ իրականության մեջ փորձ է արվում հայալեզու և թուրքալեզու արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի ու գիտական աշխատությունների հիման վրա քննության առնել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը 1912-1922 թթ.: Սույն հետազոտության նպատակն է գիտական շրջանառության մեջ նորահայտ փաստերի ներդրմամբ Հայոց ցեղասպանության և պոլսահայ համայնքի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունների շարքը համալրել ևս մեկ հիմնարար հետազոտությամբ: Ատենախոսության թեման և հիմնական հարցադրումները, որոնց մեծ մասը շարադրված են եզրակացությունների տեսքով, պարունակում են գիտական նորույթ ոչ միայն հայրենական պատմագիտության, այլև օտարալեզու մասնագիտական գրականության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկա հետազոտությունը կարող է օգտակար լինել Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռների, հայ-թուրքական հարաբերությունների և Օսմանյան կայսրության էթնիկ հանրույթների պատմությամբ հետաքրքրվող ուսումնասիրողների համար: Ատենախոսությունն ամբողջությամբ կամ նրա առանձին դրույթներ կարող են օգտակար նյութ հանդիսանալ ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում, մասնավորապես՝ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում «Օսմանյան կայսրության էթնոքաղաքականությունը և նրա հետևանքները», «էթնիկական հիմնախնդիրները Թուրքիայի հանրապետությունում», «Թուրքական

ժխտողականության հիմնահարցեր», «Հայոց ցեղասպանությունը /պատմություն և տեսություն/», «Օսմանյան կայսրության և Թուրքիայի հայ գաղթօջախներ», «Ազգային փոքրամասնությունները Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի հանրապետությունում» առարկաների դասավանդման համար: Ատենախոսությունը կարող է ծառայել հետագա ուսումնասիրությունների, աշխատությունների, դասագրքերի, ուսումնական ու մեթոդական ձեռնարկների պատրաստման ժամանակ:

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Ատենախոսությունը պատրաստվել է հայերեն, թուրքերեն (նաև՝ օսմաներեն), ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, աշխատությունների և պարբերական մամուլի հրատարակումների հիման վրա: Աշխատության համար կարևոր նշանակություն են ունեցել ինչպես հայկական և օսմանյան արխիվային փաստաթղթերն ու զեկուցագրերը, այնպես էլ սկզբնաղբյուրային արժեք ունեցող տարաբնույթ վավերագրերը, առանձին ուսումնասիրություններ և աշխատություններ:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) և Թուրքիայի Օսմանյան վարչապետական արխիվի (Başbakanlık Osmanlı Arşivi (այսուհետև՝ BOA)) ֆոնդերում պահվող համապատասխան փաստաթղթերն ու նյութերը, որոնց գերակշիռ մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Սկզբնաղբյուրների շարքում առաջնային կարևորություն ունեն Օսմանյան վարչապետական արխիվի նյութերը, որոնք ձեռք ենք բերել Ստամբուլ կատարած մեր այցելությունների ընթացքում¹: Դրանք հարուստ նյութ են պարունակում երիտթուրքական իշխանությունների և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հարաբերությունների, Հայոց ցեղասպանության

¹ St' u Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Sadaret – Divan-ı Hümayun Gayr-ı Müslim Cemaat Defterleri, nr. 11, s. 16-25. Bâb-ı Âlî Evrak Odası, nr. 4204/315299 lef 2; nr. 4233/317421; nr. 4270/320227; nr. 4510/338204 lef 3; nr. 4549/341114 lef 2. Emniyet-i Umumiye Müdüriyeti İkinci Şube, nr. 31/61; nr. 39/35 lef 17; nr. 54/67 lef 16. Dâhiliye Nezâreti İdarî Kısım, nr. 113/53 lef 1, 3, 6, 10, 11. Dâhiliye Nezâreti Şifre Kalemî, nr. 63/136; nr. 84/196; nr. 95/212; nr. 518/46; nr. 522/59; nr. 530/18; nr. 548/29; nr. 578/9. Dâhiliye Nezâreti Umûr-i Mahalliye-i Vilayât Müdüriyeti, nr. 61/13 (1332.M.30-). Adliye ve Mezahib İrâdeleri, nr. 113/1331. N/02. İrâde – Mabeyn-i Hümayûn, nr. 13/1331.Z/026. İrâde – Meclis-i Mahsus-u Vükelâ, nr. 170/1331.L/31. Meclis-i Mazbataları Vükelâ, nr. 183/8; nr. 203/14; nr. 213/89; nr. 231/286.

վերաբերյալ թուրքական պատմագիտության կողմից ներկայացվող դրդապատճառների ուսումնասիրման և այլնի տեսանկյունից:

Ատենախոսության թեմայի հիմնական հարցադրումների վերաբերյալ մեծ կարևորություն ունեն նաև Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում պահվող՝ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ որոշակի քանակությամբ արխիվային նյութերը²:

Ուշադրություն ենք դարձրել նաև Վաղարշակ սարկավազ Սերովբյանի, Երվանդ Փամպուքյանի, Սանդրո Բեհրույանի, Ջեյմս Բրայսի, Գյունայ Օզդոլանի (Օհաննես Քլչդադի հետ համատեղ) կողմից հրատարակված փաստաթղթերի և կոնդակների ժողովածուներին³:

Ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում է Կոստանդնուպոլսի հայոց 79-րդ պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայան Բաղդադցու հուշագրությունը⁴: Այն գրվել է հետպատերազմյան տարիներին, Բաղդադում, Կահիրեի «Մտավորականների սպասարկության գրասենյակ»-ի հորդորով: «Յաճախ շատեր յորդորեցին զիս զիրի առնելու իմ յուշերս,- գրում է Զավեն պատրիարքը նախաբանի մեջ,- նկատի առնելով որ դժբախտ պարագաներու այնպիսի շրջանի մը՝ որ Թրքահայոց ամենէն փոթորկալից ժամանակամիջոցը կրնայ համարուիլ»⁵: Հուշագրության առանձնահատկությունն այն է, որ Զավեն պատրիարքն իր պաշտոնավարության շրջանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական գործընթացները ներկայացնում է հաճախ բացառապես վավերագրական նյութի վրա հիմնված:

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 1, գ. 102; ց. 5, գ. 21, 25, 26, 28, 52, 53, 61, 62, 76, 86, 90; ֆ. 222 (Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ), ց. 1, գ. 1:

³ Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, կազմեց՝ Բեհրույան Ս., Տ. Տ. Սահակ Բ Խապայեան կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., Երևան, 1997: Անդրանիկ կոնդակներ սահմանադրական շրջանի պատրիարքներու, հրատ. Պատրաստեց Սերովբեան սրկ. Վ., Ստանպոլ, 2013: Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան, խմբագիր՝ Փամպուքեան Ե., ԺԱ. հատոր, Պէյրուօ, 2015: Özdoğan G., Kılıçdağı O., Lozan Antlaşması Azınlık Hakları Maddeleri (Madde 37'den – 44'e Türkiye Ermenilerini Duymak: Sorunlar, Talepler Ve Çözüm Önerileri, İstanbul, 2012. Bryce J., *The Treatment Of Armenians In The Ottoman Empire 1915-1916*, London, 1916.

⁴ Տե՛ս Զաւէն Արքեպս., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

⁵ Նույն տեղում:

Ուսումնասիրության շրջանակներում առաջին անգամ փորձ է արվել վերականգնելու Ջավեն Տեր-Եղիայանի լիակատար կենսագրությունը, որը շարադրած է մի շարք կենսագրական ժողովածուների, աշխատությունների և պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա⁶:

Հայրենական պատմագիտության մեջ Ջավեն պատրիարքի գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ականավոր գիտնականներ Ջոն Կիրակոսյանը, Հրաչյա Աճառյանը, Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքյանը, Արսեն Ավագյանը (Կայծ Մինասյանի հետ համատեղ) և ուրիշներ⁷:

Լայնորեն օգտագործված են նաև թուրք պատմաբանների՝ Ալի Արսլանի, Իբրահիմ Աթնուրի, Էրդալ Այդողանի, Յուսուֆ Հիքմեթ Բայուրի, Գյուլնիհալ Բոզքուրթի, Աքըն Չելիքի, Հիքմեթ Օզդեմիրի, Ջեքի Սարըհանի, Ջեքերիյա Թյուրքմենի, Շերեֆ Ունալի և այլոց ուսումնասիրությունները⁸: Դրանք

⁶ Տե՛ս Ջավեն Արքեպս., նշվ. աշխ.: Օրմանեան արք. Մ., Ազգապատում, Գ. Հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001: Կերտող Ա., Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003: Անդրանիկ կոնդակներ սահմանադրական..., նշվ. աշխ.: Ազգ. ժողովին հանդիսատար նիստը, Ջավեն Եպս.՝ Պատրիարք ընտրուած 82ին 64 քուէովը, «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, 31 Օգոստոս: Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015; Pamukciyan K., Biyografileriyle Ermeniler, C. IV, İstanbul, 2003. Tuğlacı P., Tarih Boyunca Batı Ermenileri, Cilt: III (1891-1922), İstanbul, 2009.

⁷ Տե՛ս Աճառյան Հ., Տաճկահայոց պատմությունը, Կ. Պոլիս, 1915: Պալաքեան Եպիսկ. Գ., Հայ գողգոթան. Դրոագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տեր Ջօր, Բ. Հատոր, Փարիզ, 1959: Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967: Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002: Avagyan A., Minassian G. F., Ermeniler Ve İttihat Ve Terakki- İşbirliğinden çatışmaya, İstanbul, 2005.

⁸ Տե՛ս Arslan A., Ermeni Papalığı - Eçmiyazin Kilisesi'nde Stratejik Savaşlar, İstanbul, 2010. Atnur İ., Türkiye'de Ermeni Kadınları Ve Çocukları Meselesi (1915-1923), Ankara, 2005. Aydoğan E., İttihat Ve Terakki'nin Doğu Politikası (1908-1918), Ankara, 1967. Bayur Y. H., Türk İnkilâbı Tarihi, Cilt: II, Kısım III, Ankara, 1991. Bozkurt G., Alman-İngiliz Belgerinin Ve Siyasi Gelişmelerin İşığı Altında Gayrimüslim Osmanlı Vatandaşlarının Hukukî Durumu (1839-1914), Ankara, 1996. Çelik A., Osmanlı'nın Ermeni'yle İmtihanı - Mütareke Dönemi İstanbul Hükümetleri Ve Ermeniler, İstanbul, 2011. Özdemir H., Cemal Paşa Ve Ermeni Göçmenler- 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009. Sarıhan Z., Kurtuluş Savaşı Günlüğü 1 (Mondros'tan Erzurum Kongresi'ne Kadar), Ankara, 1982. Türkmen Z., İşgal Yıllarında İstanbul'daki Uygulamalar: Mütareke Döneminde Ermeniler Tarafından Türk Çocuklarının Kaçırılması Ve Hıristiyanlaştırılması, KÖK Araştırmalar, Ankara, 2000, Cilt: II, Sayı: 2. Ünal Ş., Uluslararası Hukuk Açısından Ermeni Sorunu, Ankara, 2011.

ամբողջությամբ կամ մասամբ հիմնված են թուրքական պաշտոնական պատմագրության մոտեցումների վրա: Այդուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել Ստամբուլի պետական համալսարանի դասախոս, պատմագիտության դոկտոր Ռամազան Էրհան Գյուլլուի «Հայկական հարցը և Ստամբուլի հայոց պատրիարքարանը (1878-1923)» մենագրությունը, որը, Թուրքիայի պատմագիտական ընկերության հրատարակություններից մեկը լինելով հանդերձ, որոշակի անկողմնակալ դրույթներ է պարունակում սույն թեմայի ուսումնասիրության առնչությամբ⁹:

Սույն աշխատության համար արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև հայալեզու և թուրքալեզու պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումները՝ Հայաստանի ազգային գրադարանում պահվող պարբերական մամուլի ֆոնդը, Ստամբուլի հայոց պատրիարքարանի և Ստամբուլի «Բեյազըր» պետական գրադարանի արխիվային պահոցներում գտնվող բացառիկ հավաքածուները: Մասնավորապես, ուսումնասիրության մեջ ներառվել են Կ. Պոլսում լույս տեսնող հայալեզու հետևյալ պարբերականներից «Ազդարարը», «Առաջամարտը», «Բիզանդիոնը», «Ժամանակը», «Հեռածայնը» և այլն:

Թուրքալեզու մամուլի հրապարակումները քաղել ենք հետևյալ լրագրերից, որոնք նույնպես լույս են տեսել Կ. Պոլսում՝ “Akşam”, “İkdam”, “Sabah”, “Taksim-i Vekayi”, “Tanin”, “Vakit” (տառադարձված են թուրքերենի):

Օգտվել ենք նաև համացանցում տեղ գտած մի շարք հոդվածներից, որոնք կարևոր ներդրում են ունեցել որոշակի թեմաների խորը ուսումնասիրության առումով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթազույմներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 135 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, տրված են ժամանակագրական շրջանակները, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակներն ու խնդիրները,

⁹ St'ü Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015.

գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հիմնադրումը, դերն ու նշանակությունը արևմտահայության կյանքում. (պատմական ակնարկ)», ներկայացվում է 1461 թ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության ստեղծման պատմությունը, ներառյալ առաջին պատրիարք Հովակիմ Եպիսկոպոսի պաշտոնավարման շրջանի հետ կապված որոշակի հարցեր՝ պաշտոնավարման ժամանակահատվածը, անձի հանգամանքը, հոգևոր իշխանության տարածման սահմանները, «պատրիարք» եզրույթի կիրառման հարցը և այլն: Հայերին տրված լիազորությունների համատեքստում արժևորվում է 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության ընդունումը՝ ընդգծելով դրա նշանակությունն արևմտահայության կյանքում¹⁰:

Երկրորդ ենթագլխում՝ «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման շրջանում (1912-1913)», քննության է առնվում 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ունեցած դերակատարությունը¹¹: Մանրամասն ներկայացվում են ժամանակի պատրիարք Հովհաննես Արշարունու օրոք (1912-1913) Հայ հեղափոխական դաշնակցության համագործակցությամբ հայոց պատրիարքարանի ձեռնարկած քայլերը հայկական բարենորոգումների ծրագրի ստեղծման վերաբերյալ, մասնավորապես՝ պատրիարքարանի բանակցություններն ինչպես կառավարության, այնպես էլ Անտանտի երկրների և Հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի հետ¹²: Վեր է հանվում

¹⁰ Տե՛ս Ալաոյաճեան Ա., Ազգային Սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1910:

¹¹ Տե՛ս Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1933, Ա:

¹² Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 61: Հայկական հարցը Ազգ. Ժողովին մէջ. Միաձայն վստահութիւն Վարչութեան. Հիմնաւոր երաշխիքներ պէտք են միայն, «Առաջամարտ», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր:

հայոց պատրիարքարանի գործուն միջամտությունն արևմտահայության իրավունքների վերականգնման ուղղությամբ: Մանրամասն ներկայացվում է նաև Կոստանդնուպոլսում գտնվող եվրոպական պետությունների ներկայացուցչությունների հետ բանակցությունների նպատակով հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ ստեղծված երկու հանձնաժողովների գործունեությունը, որի արդյունքում պատրիարքարանի կազմած նախագիծը մեծամասամբ նպաստում է Կ. Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի՝ 1913 թ. հունիսի 4-ին ներկայացրած հայկական բարենորոգումների վերաբերյալ ծրագրի պատրաստման համար¹³:

Երրորդ ենթագլխում՝ «Չավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը և իր ընտրության հանգամանքները», անդրադարձ է կատարվում Հովհաննես Արշարունի պատրիարքի պաշտոնավարության հանդեպ անվստահություն հայտնած հայ հասարակական-քաղաքական շրջանակներում առկա բողոքի արտահայտությանը¹⁴: Կարևորվում է պատրիարքի նոր թեկնածուի ընտրության հանգամանքն ինչպես հոգևոր-մշակութային կամ ներքին համայնքային կենսական պահանջները բավարարելու, այնպես էլ օսմանյան իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում քաղաքագետին բնորոշ հմտությունների դրսևորմամբ: Կարևորվում է հայկական բարենորոգումների շուրջ բանակցություններն առաջնորդելու նպատակով գավառահայության խնդիրներին և պահանջներին քաջաձանոթ թեմական առաջնորդներից մեկին ընտրելու հանգամանքը¹⁵: Ուստի ներկայացվում են 1913 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած ընտրության արդյունքները, որոնց համաձայն Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք է ընտրվում Դիարբեքիի հայոց թեմի առաջնորդ Չավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը¹⁶:

Երկրորդ գլուխը՝ «ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ», բաղկացած է վեց ենթագլխից:

¹³ Տե՛ս Փափագեան Վ., նույն տեղում, 1933, Բ: Türkmen Z., Vilayât-ı Şarkiye (Doğu Anadolu Vilayetleri) İslahat Müfettişliği 1913-1914, Ankara, 2006.

¹⁴ Տե՛ս Ս. Պատրիարքին հրաժարականէն ետք Կոստանական ժողովին վաւերացումը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 21 Յուլիս: Հմմտ.՝ BOA. İ.AZN. nr. 113/1331. N/02.

¹⁵ Տե՛ս Պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցուցակը, «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, 29 Օգոստոս:

¹⁶ Տե՛ս BOA. İ. MMS. nr. 170/1331.L/31. Հմմտ.՝ BOA. MV. nr. 231/286.

Առաջին ենթագլխում՝ «Կոստանդնուպոլսի հայոց նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի շրջայն Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում», մանրամասն ներկայացվում է պատրիարքական տեղապահ Գաբրիել արքեպիսկոպոսի հորդորով մինչև Կոստանդնուպոլիս ժամանելը նորընտիր պատրիարքի շրջայնը հայաբնակ գավառներով (Բիթլիս, Մուշ, Էրզրում, Տրապիզոն)՝ ծանոթանալու արևմտահայության ներկա վիճակին¹⁷: Քննության է առնվում նահանգային իշխանությունների կեղծ վերաբերմունքը հայոց պատրիարքի նկատմամբ¹⁸:

Երկրորդ ենթագլխում՝ «Օսմանյան խորհրդարանի 1914 թ. ընտրությունները և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը», քննության է առնվում 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին հայ թեկնածուների մասնակցության հարցը: Ընդգծվում է հայազգի պատգամավորների պատշաճ ներկայացվածության վերաբերյալ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գլխավորությամբ և նրա շուրջը համախմբված հայ կաթոլիկ և բողոքական համայնքների, հայ քաղաքական կուսակցությունների, ազգային կազմակերպությունների միասնականության դրսևորումը¹⁹: Վերլուծության են ենթարկվում պատրիարքարանի կողմից հայկական համայնքին 20 պատգամավորական մանդատ հատկացնելու և ազգային ընտրություն իրականացնելու վերաբերյալ երիտթուրքական կառավարությանը ներկայացրած պահանջները²⁰: Մեկ անգամ ևս փաստվում է երիտթուրքական իշխանությունների վճռականությունը հայերի և ոչ մուսուլման մյուս ժողովուրդների նկատմամբ օրենսդրությամբ վերապահված իրավունքների ոտնահարելու ուղղությամբ: Ներկայացվում են խորհրդարան անցած 15 հայ պատգամավորների գործունեությունը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը²¹:

¹⁷ Տե՛ս Զաւեն Արքեպս., նշվ. աշխ.:

¹⁸ Տե՛ս Ermeni Patrik-i Cedidi, Tanin, İstanbul, 19 Kasım 1913. Հմնմ.՝ BOA. MV. nr. 183/8.

¹⁹ Տե՛ս Ընտրութիւններու հարցը..., «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 28 Յունուար:

²⁰ Տե՛ս Demir F., Osmanlı Devleti'nde II. Meşrutiyet Dönemi Meclis-i Mebusan Seçimleri (1908-1914), İmge Kitabevi Yayınları, 2007.

²¹ Տե՛ս Օսմանեան խորհրդարանին մէջ հայ մէպոսներու խորհրդակցութիւնը. Բարենտրոգմանց եւ զինուորագրութեան հարցերը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 4 Մայիս: Karacakaya R., Meclis-i Mebusan Seçimleri Ve Ermeniler (1908-1914), Yakın Dönem Türkiye Araştırmaları, İstanbul Üniversitesi Atatürk ilkeleri Ve inkilâp Tarihi Enstitüsü Dergisi, Yıl: 2/2003, Sayı: 3, İstanbul, 2003.

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական բարենորոգումների ծրագիրը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի օրոք», ներկայացվում են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունն ինչպես Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի, այնպես էլ երիտթուրքական կուսակցության պարագլուխների հետ ունեցած բանակցություններում հայկական բարենորոգումների ծրագիրը վերջնական հանգրվանի հասցնելու ուղղությամբ²²:

Չորրորդ ենթագլխում՝ «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը Հայոց ցեղասպանության տարիներին», քննության են առնվում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի իրականացրած քայլերը Հայոց ցեղասպանության տարիներին: Մանրամասն ներկայացվում են մինչպատերազմյան շրջանում պատրիարքարան ուղարկված գավառահայության բողոքները հայաշատ նահանգներում իշխանության թողտվության պայմաններում քրդերի կողմից իրականացվող անօրինական գործողությունների, կոտորածների և ավերածությունների վերաբերյալ²³: Ընդգծվում են արևմտահայության կոտորածները դադարեցնելու նպատակով Զավեն պատրիարքի ապառոյուն ջանքերը երիտթուրքական կառավարության և օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունների ու առանձին անհատների հետ ունեցած բանակցություններում²⁴: Ներկայացվում են նաև Կոստանդնուպոլսում և մի շարք վայրերում (Քոնիա, Հալեպ, Կարին, Սամսուն, Բրուսա, Բանդըրմա, Էքիշեհիր, Դամասկոս, Երուսաղեմ) ապաստան գտած հայ գաղթականության փրկության և խնամքի նպատակով Զավեն պատրիարքի նախաձեռնությամբ և անմիջական վերահսկողությամբ իրականացված միջոցառումները²⁵:

Հինգերորդ ենթագլխում՝ «Հայոց ազգային սահմանադրության և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը», վերլուծել ենք 1916 թ. օգոստոսի 10-ին երիտթուրքական կառավարության որոշմամբ 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության չեղարկման և Կոստանդնուպոլսի հայոց

²² Տե՛ս Զավեն Արքեպս., նշվ. աշխ.: Güllü R. E., նշվ. աշխ.: Ermeni Patriği'nin Ziyareti, İkdam, 9 Mart 1914.

²³ Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 28:

²⁴ Տե՛ս Lepsius J., Rapport Secret Sur Les Massacres d'Arménie : 1915-1916, Paris, 1918.

²⁵ Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 21:

պատրիարքարանի լուծարման նախադրյալներն ու դրդապատճառները: Ներկայացված է թուրքական պատմագրության մեջ շրջանառվող թեզերից մեկը, որի համաձայն օսմանյան իշխանությունները Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի և Էջմիածնի կաթողիկոսության հարաբերությունների դադարեցմամբ նպատակ են ունեցել չեզոքացնել Էջմիածնի կաթողիկոսության միջոցով Ռուսական կայսրության և արևմտահայության միջև առկա «վտանգավոր» կապը²⁶:

Վեցերորդ ենթագլխում՝ «Ջավեն Տեր-Եղիայանի գործունեությունն աքսորի տարիներին (1916-1918)», մանրամասն լուսաբանված են հայոց պատրիարքարանի լուծարմամբ Բաղդադ և Մոսուլ աքսորված հայոց պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանի աքսորի տարիները²⁷: Կարևորվել է վերոհիշյալ բնակավայրերում անգլիական զորահրամանատարության և տեղի հայերի համագործակցությամբ պատրիարքի ազգանպաստ գործունեությունը հայ գաղթականներին փնտրելու և նրանց ապաստան տալու ուղղությամբ:

Երրորդ գլխում՝ «ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1918-1922)», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայոց ազգային սահմանադրության վերահաստատումը և Ջավեն պատրիարքի վերադարձը Կոստանդնուպոլիս», ներկայացվել են 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև զինադադարի կնքումից հետո 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության վերահաստատման և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանի պաշտոնական լիազորությունների վերականգման հանգամանքները²⁸: Մասնակի անդրադարձ է կատարվել պատրիարքարանի նախաձեռնությամբ ստեղծված «Տեղեկատու դիվան»-ի գործունեությանը²⁹:

²⁶ Տե՛ս Arslan A., II. Meşrutiyet Devrinde Eçmiyazin Katogigosluğu'nun Etkisi Kırmaya Yönelik Çalışmalar, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi Bildirileri, Cilt: II, Ankara, 2007. Yalçınkaya A., Ermeni Patrikliği'nin Uluslararası Aktörleşmesi, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi Bildirileri, Cilt: II, Ankara, 2007.

²⁷ Տե՛ս Զաւէն Արքեպօ., նշվ. աշխ.:

²⁸ Տե՛ս Ermeni Patrikhanesi'nin Yeniden Tesisi, Vakit, İstanbul, 21 Kasım 1918. Güler A., Ermenilerle İlgili 1916 Ve 1918 Yıllarında Yapılan Hukuki Düzenlemeler, OTAM- Ankara Üniversitesi Osmanlı Tarihi Araştırma Ve Uygulama Merkezi Dergisi, Sayı: 6, Ankara, 1995.

²⁹ Kévorkian R., Le génocide des Arméniens, Paris. 2014.

Երկրորդ ենթագլխում՝ «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեությունը 1919-1922 թվականներին», առանձնակիրեն տրված է բռնի իսլամացված հայ որբերի ու կանանց փրկելու ուղղությամբ Ջավեն պատրիարքի կատարած գործունեությունն ընդհուպ իր պաշտոնավարության ավարտը: Ընդգծված է պատրիարքի հովանավորությամբ ստեղծված «Հայ ազգային խնամատարություն» կազմակերպության, տարագրյալ կայանների և «Չեզոք տան» կարևորությունը նրանց վերադարձնելու հայկական համայնք, հայեցի կրթություն և դաստիարակության տալու տեսանկյունից³⁰:

Երրորդ ենթագլխում՝ «Ներհամայնքային հակասությունները և Ջավեն պատրիարքի հեռացումը Կոստանդնուպոլսից», տրված է հայ հասարակական-քաղաքական ուժերի դավադրության հետևանքով Ջավեն պատրիարքի պաշտոնական լիազորությունների դադարեցման վերաբերյալ գործընթացը³¹: Մասնակի անդրադարձ է կատարվել Ջավեն արքեպիսկոպոսի հետագա գործունեությանը, մասնավորապես Վառնայում, Փարիզում, Լոնդոնում, Կահիրեում, Կիպրոսում, Բաղդադում և այլուր³²:

Ատենախոսության վերջում ընդհանրացվում է աշխատանքը, ներկայացվում են հիմնական եզրակացություններն ու օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ բաժնում ի մի են բերված ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները:

1. 1913 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած՝ պատրիարքի ընտրություններին ճնշող մեծամասնությամբ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք ընտրված Դիարբեքիի հայոց թեմի առաջնորդ Ջավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանի առավելությունը պայմանավորվել է բացառապես գավառահայության խնդիրներին ու կենսական պահանջներին քաջաձանոթ լինելու և օսմանյան իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում քաղաքագիտական հմտությունների դրսևորման հանգամանքներով:

³⁰ Տե՛ս Գզոյան Է., Փրկություն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2016, N 2: Hür A., İttihat ve Terakki'nin Çocuk Askerleri, Taraf, İstanbul, 12 Nisan 2009.

³¹ Güllü R. E., նշվ. աշխ.:

³² Տե՛ս Ջավեն Արքեպոս., նշվ. աշխ.:

2. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանին դաշնակցականների հետ համագործակցությամբ հաջողվել է Ռուսական կայսրության անմիջական վերահսկողությամբ կազմված՝ Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների իրականացման ծրագրի հիմքում ամրագրել արևմտահայության հիմնական պահանջները:
3. 1914 թ. օսմանյան մեջլիսի (խորհրդարան) ընտրություններին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանն ազգային ընտրության և ըստ բնակչության թվաքանակի հայերին հասանելիք 20 պատգամավորական մանդատի պահանջով տևական բանակցություններ է վարել երիտթուրքական իշխանությունների ներկայացուցիչների հետ: Սակայն վերջիններս՝ հայերի հանդեպ ընդգծված խտրական քաղաքականության հետևանքով մատնվել է անհաջողության, որի արդյունքում 1. բացառվել է ազգային ընտրության իրավունքը, 2. հայերին տրվել է ընդամենը 15 պատգամավորական տեղ:
4. Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը հատուկ շրջաբերական է ուղարկել նահանգների առաջնորդարաններին՝ տեղի հայ բնակչությանը հրահանգելով կայսրության մյուս քաղաքացիների նման կատարել օսմանյան հայրենիքի հանդեպ եղած պարտավորությունները:
5. Օսմանյան կայսրության հայ բնակչության հանդեպ տեղի ունեցող կոտորածներին, ավերածություններին ու թալանին վերջ դնելու նպատակով Ջավեն պատրիարքը բազմիցս դիմել է Կոստանդնուպոլսում տեղակայված եվրոպական պետությունների դեսպանություններին, որոնք, չհաշված մասնակի դեպքերը, անտարբերություն են դրսևորել արևմտահայոց հոգևոր պետի հորդորների և խնդրանքների հանդեպ:
6. 1914 թ. աշնանը տեղի ունեցած խորհրդակցությունների արդյունքում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որոշմամբ հայ գաղթականությանն աջակցելու նպատակով եղել է շրջիկ հիվանդանոց ստեղծելու գաղափար, ինչը երիտթուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում մատնվել է անհաջողության:
7. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի նկատմամբ հատկապես 1914-1916 թթ. օսմանյան կառավարության քաղաքական ճնշումները սահմանափակել կամ առհասարակ արգելել են պատրիարքարանի գործունեությունը:

8. Գաղտնիության պայմաններում Ջավեն պատրիարքին հաջողվել է պատրիարքարանի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների զգալի մասն ուղղել Քոնիայում, Հալեպում, Կարինում, Սամսունում, Բրուսայում, Բանդըրմայում, Էքքիշեհիրում, Դամասկոսում, Երուսաղեմում և հայ գաղթականներով լցված մյուս խոշոր կայանատեղիներին:
9. Մինչ օսմանյան կառավարության կողմից հայկական կազմակերպությունների դրամական հաշիվներն արգելափակելու վերաբերյալ որոշման ընդունումը 1916 թ. հունվարի 29-ին պատրիարքարանի Քաղաքական ժողովի որոշմամբ օսմանյան և հայկական բանկերում պահվող՝ հայկական հաստատությունների (Դպրոցատեր Տիկնանց վարժարան, Ազգանվեր Հայուհյաց ընկերություն, «Ջավարյան» հիմնադրամ, «Օգնենք Սասունի» և այլն) գումարները փոխանցվել են պատրիարքարանի հաշվին՝ ի նպաստ արևմտահայ գաղթականների փրկության և խնամքի կազմակերպման:
10. 1916 թ. օգոստոսի 10-ին երիտթուրքական կառավարության որոշմամբ 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության չեղարկումը և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի լուծարումը եղել է երիտթուրքական քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Ըստ որում, օսմանյան կառավարությունը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության լուծարման վերաբերյալ որոշման ընդունմամբ նպատակ է հետապնդել կայսրության հայ կրոնական բոլոր կառույցները Սիսի կաթողիկոսությանը միացնելու միջոցով կանխել Ս. Էջմիածնի միջամտությունն օսմանյան Թուրքիայի գործերին:
11. 1916 թ. օգոստոսի 22-ին Բաղդադ, այնուհետև՝ Մոսուլ արքայազնի հայոց պատրիարքը անգլիական զորահրամանատարության ջանքերով ակտիվորեն զբաղվել է Հայոց ցեղասպանության հետևանքով հիմնականում Սղեղից ու Կարինից եկած և Մոսուլում ապաստան գտած շուրջ 1700 հայ գաղթականների փրկության գործով:
12. Անտանոսի երկրների և Օսմանյան կայսրության միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Կոստանդնուպոլսի հայության և Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարության գործուն միջամտությամբ հնարավոր է դարձել Ջավեն պատրիարքի վերադարձը Կ. Պոլիս:

13. 1919-1922 թթ. Ջավեն պատրիարքը կազմակերպել է Հայոց ցեղասպանության վերապրածների որոնման աշխատանքներ, մասնավորապես՝ նրան հաջողվել է մահմեդական ընտանիքներում գտնվող հայ կանանց և երեխաներին գտնելու նպատակով ստեղծել «Հայ ազգային խնամատարություն» կազմակերպությունը, որի քառամյա գործունեության շնորհիվ վերջնական թուրքացումից փրկվել են շուրջ 4000-5000 հայ որբեր:
14. Ջավեն պատրիարքի հանդեպ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում առաջ եկած անվստահության հետևանքով և առավելապես օսմանյան կառավարության ոչ բարիդրացիական վերաբերմունքի արտահայտման պայմաններում 1922 թ. դեկտեմբերի 8-ին վճռվել է հայոց պատրիարքի պաշտոնավարության ավարտը:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում

1. Ջավեն եպիսկոպոս Տեր-Եղիայան և իր ընտրության հանգամանքները, «Էջմիածին», հ. ԺԱ, Էջմիածին, 2018, էջ 134-140:
2. Օսմանյան խորհրդարանի 1914 թ. ընտրությունները և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, «Պատմաբանասիրական հանդես», N 1 (210), Եր., 2019, էջ 135-144:
3. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեությունը 1919-1922 թվականներին, «Բանբեր հայագիտության», N 1 (19), Եր., 2019, էջ 55-62:
4. Հայոց ազգային սահմանադրության և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», հ. Գ, Էջմիածին, 2019, էջ 126-136:
5. Հայկական հարցի վերաբացումը. Հայկական բարենորոգումների ծրագիրը Հովհաննես Արշարունի պատրիարքի օրոք (1911-1913), «Գիտական Արցախ», N 1 (2), Եր., 2019, էջ 382-390:
6. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանի աքսորը 1916-1918 թթ., «Բանբեր Մատենադարանի», N 1, Եր., 2019, էջ 195-204:

MANVELYAN SERGEY A.
THE ACTIVITIES OF THE ARMENIAN PATRIARCHATE OF
CONSTANTINOPLE IN 1912-1922

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on July 30, 2019, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The dissertation is dedicated to unveiling of the activities of the Armenian Patriarchate of Constantinople in 1912-1922.

The introduction presents the timeliness of the theme, the purpose and the objectives of the dissertation, the scientific originality of the study, the time framework of the research, the examination of the existing literature and the sources referring to the issue.

The first chapter of the dissertation titled "The activities of the Armenian Patriarchate of Constantinople on the eve of the First World War" consists of three sub-chapters. In the first chapter we explored the circumstances of the creation of the Armenian Patriarchate of Constantinople, the role and significance of the Western Armenian community. The preparations for the Armenian Reform Program in the Eastern Armenian-populated provinces of the Ottoman Empire known as the Armenian Question, during the reign of the Armenian Patriarch of Constantinople Hovhannes Arsharouni (1912-1913) were presented in detail. On September 12, 1913, Primate of the Diocese of Diarbekir, Bishop Zaven Ter-Yeghiayan, was elected as the Patriarch, and details are provided.

Second Chapter: "The Armenian Patriarchate of Constantinople during the First World War." is divided into six sub-chapters. The newly-elected Armenian Patriarch of Constantinople Zaven Ter-Yeghiayan travels to the Armenian-populated provinces of the Ottoman Empire. During the reign of the Armenian Patriarch of Constantinople, Zaven Ter-Yeghiayan, the Ottoman Parliament adopted in 1914 the work of the Armenian Patriarchate of Constantinople towards the representation of the Armenian MPs in the elections and the preparation of the Armenian Reforms program. The steps taken by the Armenian Patriarchate

of Constantinople during the years of the Armenian Genocide, as well as Armenian Constitution of 1863, were examined. In 1916, the Young Turks' Government ceased the National Constitution of Western Armenians and started elimination of the Armenian Patriarchate of Constantinople.

Chapter Three. "The Armenian Patriarchate of Constantinople during World War I (1918-1922)". Covered 1916-1918 years of exile to Baghdad and Mosul exiled Armenian Patriarch Zaven Ter-Yeghiayan. In 1918, October 30, after the cease-fire between the Entente states and the Ottoman Empire, Reaffirmation of the Western Armenian National Constitution of 1863 and the restoration of the official powers of the Armenian Patriarch of Constantinople Zaven Ter-Yeghiayan was signed. The orphanage activities of the Armenian Patriarchate of Constantinople were especially emphasized in 1919-1922. The interlocutors also referred to the suspension of the official powers of Zaven Patriarch as a result of the conspiracy of the Armenian public and political forces and the further activity of Zaven Archbishop.

The conclusion sums up the main outcomes and results of the PhD thesis.

МАНВЕЛЯН СЕРГЕЙ А.
ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ПАТРИАРХАТА КОНСТАНТИНОПОЛЯ
В 1912-1922 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “ История Армении ”.

Защита состоится 30-го июля 2019 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24 /4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению деятельности Армянского Патриархата Константинополя в 1912-1922 гг.

В первой главе “Деятельность Константинопольского Армянского Патриархата накануне Первой мировой войны” мы рассмотрели обстоятельства создания Армянского Патриархата в Константинополе, роль и значение западноармянской общины. Подробно представлена подготовка Программы армянских реформ в восточно-армянонаселенных провинциях Османской империи, известной как «Армянский вопрос», во времена правления Армянского патриарха Константинополя Ованнеса Аршаруни (1912–1913 гг.)

12 сентября 1913 года Патриархом был избран Предстоятель Диарбекирской епархии епископ Завен Тер-Егияян.

Вторая глава: «Армянский Патриархат Константинополя в годы Первой мировой войны». Новоизбранный Константинопольский армянский патриарх Завен Тер-Егияян совершает поездки в населенные армянами провинции Османской империи. Во время правления Константинопольского патриарха Завена Тер-Егияяна парламент Османской империи в 1914 году принял усилия Армянского патриархата по представительству армянских депутатов на выборах и подготовке программы реформ в Западной /Османской Армении. Были рассмотрены шаги, предпринятые Армянским Константинопольским Патриархатом в годы Геноцида армян, а также внедрения Армянской Конституции 1863 года. В 1916 году правительство младотурок приостановило национальную конституцию западных армян и начало ликвидацию Армянского патриархата Константинополя.

В третьей главе «Армянский Патриархат Константинополя во время Первой Мировой войны (1918-1922)» рассматривается изгнание в ссылку в 1916-1918 годах в Багдад и Мосул армянского Патриарха Завена Тер-Егияяна. 30 октября 1918 года, после прекращения огня между государствами Антанты и Османская империей, была достигнута договорённость о восстановлении Национальной Конституции Западной Армении 1863 года и возобновлении официальных полномочий Армянского Патриарха Константинопольского Завена Тер-Егияяна.

Деятельность сиротских приютов под покровительством Армянского Патриархата была особенно развернута в 1919-1922 гг.

Рассматривается также приостановление официальных полномочий Патриарха Завена Тер-Егияяна в результате заговора армянских общественных и политических сил и дальнейшая деятельность архиепископа Завена.

